

Թռն էջմիածնի Եղիազարն կլայեցի: Սա ի կենդանութեանն Յակոբայ զխոսովութիւն ինչ յարուցանէ ընդ նմա, և հրամանաւ տանկաց Թագաւորին երթեալ ի Սիս ի նմին կաթողիկոսէն Պաշատրոյ ձեռնադրի կաթողիկոս ի վերայ Հայոց, որք ընդ իշխանութեամբ Օսմանցոց բնակէին: Զմեռոն օրհնէ յԵրուսաղէմ, և ի ձեռն նուիրակաց իւրոց բաշխէ ընդ բոլոր Թուրքաստան, արգիլելով զնուիրակութիւն էջմիածնի: Կամեր երթալ ի Հոռմ, եւ նորոգել զվաղեմեան միաբանութիւնն ընդ սուրբ Աթոռոյն Հոռմայ, բայց հասեալ ի Զմիւռ, ի սադրելոյ Զուղայեցւոցն և այլոց՝ Փաշային տեղոյն հրամանաւն արգելանի երթալ...» (17):

Ինչպէս բացայայտ է Ստեփանոս Լեհացիէ՝ մէջբերուած այս տեղիքը կը խօսի Եղիազարի՝ և ոչ թէ Յակոբ Զուղայեցիի մասին:

Հ. Աղեքսանդր վ. Պալճեան հետեւողութեամբ Ստեփանոս Լեհացիի, կը հաստատէ նաև՝ թէ Յակոբ կաթողիկոս եւս չկամեր գնալ ի Հոռմ, բայց վասն խոսովութեան իրի՛ք ի մեզ նորին եւ Եղիազարու վ., որ յետոյ յաջորդեաց նմա ոչ կարաց» (18): Օրմանեան պարտէր ա՛յս տեղիքը յիշատա-

(17) Հ. Աղեքսանդր վ. Պալճեան, Աթոռ Սրբոյն Պետրոսի Առաքելապետի, Վիեննա 1853, էջ 277:

(18) Անդ 275: